# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԹՎՈՎ 5 /ՀԻՆԳ/ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ/*

***N 1 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի N 13 և N 17 ՏԿՏ-ների պետերի կողմից տրված տեղեկանք-հիմնավորումներն ու քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Թույլատրել Աշտարակ համայնքի ղեկավարին՝

ա/ Աշտարակ համայնքի սեփականություն համարվող, Աշտարակ քաղաքի Գրիբոյեդովի փողոցի 6-րդ շենքի N4 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Նինա Իգիթյանին, Սրապիոն Պետրոսյանին, Ալլա Մուրադյանին և Մարիամ Պետրոսյանին:

բ/ Աշտարակ համայնքի սեփականություն համարվող, Աշտարակ քաղաքի Գրիբոյեդովի փողոցի 6-րդ շենքի N2 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Լյուդվիգ Ավետիսյանին, Ղազար Ավետիսյանին, Անահիտ Ասատրյանին, Համլետ Ասատրյանին, Արսեն Ասատրյանին, Դավիթ Ասատրյանին:

գ/ Աշտարակ համայնքի սեփականություն համարվող, Աշտարակ քաղաքի Արտակի փողոցի 5-րդ շենքի N9 բնակարանը /3 սենյակ/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Կոլյա Երիցյանին, Գայանե Բարսեղյանին և Հայկ Բարսեղյանին:

դ/ Աշտարակ համայնքի սեփականություն համարվող, Աշտարակ քաղաքի Գրիբոյեդովի փողոցի 2-րդ շենքի N4 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Գայանե Օհանյանին, Կարապետ Աբգարյանին, Կարեն Աբգարյանին, Գայանե Հովհաննիսյանին, Կարինե Աբգարյանին և Գնել Աբգարյանին:

ե/ Աշտարակ համայնքի սեփականություն համարվող, Աշտարակ քաղաքի Բագավան թաղամասի 2-րդ շենքի N4 բնակարանը /2 սենյակ/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Զավեն Սարգսյանին:

2. Սույն որոշման 1-ին կետի ա/, բ/ և գ/ ենթակետերի բնակարանների դեպքում /Գրիբոյեդովի փողոց՝ 6/2, 6/4, 2/4 տներ/ համապատասխան ձևակերպումներ տալ նաև բնակարաններին կից տնամերձ հողամասերին:
3. Համայնքի ղեկավարին /Ա. Անտոնյան/
   - ձևակերպումների ժամանակ հիմք ընդունել N 13 և N 17 ՏԿՏ-ների պետերի կողմից տրված տեղեկանք-հիմնավորումները, առկա փաստաթղթերն ու ուսումնասիրության ճշտված տվյալները:
4. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## <ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԹՎՈՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախապատրաստման համար հիմք են հանդիսացել Նինա Իգիթյանի, Լյուդվիգ Ավետիսյանի, Կոլյա Երիցյանի, Գայանե Օհանյանի և Զավեն Սարգսյանի վստահված անձ /հավաստագիր N18 АБ 0774059/ Արփիկ Ամիրյանի կողմից ներկայացված համապատասխանաբար Գրիբոյեդովի փողոցի 6/4, Գրիբոյեդովի փողոցի 6/2, Արտակի փողոցի 5/9, Գրիբոյեդովի փողոցի 2/4 և Բագավան թաղամասի /Վ. Համբարձումյան փողոց/ 2/4 բնակարաններն իրենց ընտանիքի անդամների անվամբ մասնավորեցնելու վերաբերյալ դիմումները:

Գործող կարգին համապատասխան քննարկվող բնակարանները նախկինում չսեփականաշնորհվելու պատճառով դրանք հանդիսանում են Աշտարակ համայնքի սեփականությունը:

Համաձայն Աշտարակի համայնքապետարանի թիվ 13 ՏԿՏ-ի պետ Թ. Սարգսյանի և թիվ 17 ՏԿՏ-ի պետ Ա. Աղաբաբյանի կողմից տրված 29.07.2016թ. N 242, 29.07.2016թ. N 241, 17.08.2016թ. N 260, 25.08.2016թ. N 270 և 26.08.20162. N 40 տեղեկանքները և հիմնավորումներն այն մասին, որ վերոնշյալ քաղաքացիներն իրենց ընտանիքներով հաշվառված և փաստացի բնակվում են նշված հասցեներում /Գրիբոյեդովի և Արտակի փողոցների բնակիչներն անցյալ դարի 70-ական թվականներից, իսկ Բագավան թաղամասինը 1994 թվականից/, կատարում են բնակարանների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ վճարումները, սակայն բնակարանների հատկացման վերաբերյալ փաստաթղթերը պահպանված չլինելու և հանրապետությունից բացակայելու պատճառով մինչև օրս նշված բնակարանները չեն մասնավորեցվել: Ըստ ՏԿՏ-ների պետերի տված տեղեկատվության և քաղաքացիների հավաստմամբ իրենց անվամբ ՀՀ-ում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի օտարում չի կատարվել:

Հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններն ու <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջները, ավագանին իրավասու է նշված բնակարաններն անհատույց օտարելու /նվիրելու/:

Առաջարկում եմ ընդունել համապատասխան որոշում:

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**<ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԹՎՈՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Աշտարակ համայնքի ավագանու <Աշտարակ համայնքի սեփականություն համարվող թվով 5 բնակարաններ անհատույց օտարելու մասին> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Աշտարակ քաղաքի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ <ՀՈՎԻԿ> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆՈՐ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Մ. ՑԱՇՉՅԱՆ/*

***N 2 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի <Հովիկ> մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային նոր դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ.-ի սեպտեմբերի 1-ից:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*30.08.2016թ.  հմ. 2-Ա որոշմամբ*

Մանկապարտեզների հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերն ու աշխատակիցների քանակը ըստ խմբերի

Աշխատակիցների թվաքանակը՝ 41

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից | | | | | | | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | Աշխատակիցների թվաքանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2 խումբ | 3 խումբ | 4 խումբ | 5 խումբ | 6 խումբ | 7 խումբ | Առավելագույնը | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 130000 | 130000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 72751 | 72751 | 1 |
| 4 | Տնտեսվար | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ, ուսումնական գծով տեղակալ | 0 | 0 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 120000 | 120000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | | 1 | 72751 | 72751 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ, 2 տարեկան և ավագ հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին 0,25 դրույք | 0,5 | 0,75 | 1 | 1,25 | 1,5 | 1,75 | 1,75 | 120000 | 210000 | 2 |
| 8 | Դերձակ | 0 | 0 | 0,5 | 0,5 | 0,75 | 0,75 | 0,75 | 72751 | 54563 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Խոհարար օգնական | 0 | 0 | 0 | 0 | 0,5 | 1 | 1 | 75000 | 75000 | 2 |
| 11 | Հնոցապան/տարաբանվոր | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 72751 | 72751 | 1 |
| 12 | Դաստիարակ | 2,24 | 3,36 | 4,48 | 5,6 | 6,72 | 7,84 | 7,84 | 120000 | 940800 | 14 |
| 13 | Դաստիարակի օգնական | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 7 | 72751 | 509257 | 7 |
| 14 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ, մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք | 0 | 0,25 | 0,5 | 0,75 | 1 | 1 | 1 | 120000 | 120000 | 2 |
| 15 | Պարուսույց, 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք | 0 | 0,25 | 0,5 | 0,75 | 1 | 1,25 | 1,25 | 72751 | 90939 | 2 |
| 16 | Դռնապան, այգեպան, բակապան | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 72751 | 72751 | 1 |
| 17 | Հավաքարար | 1 | 1 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 72751 | 145502 | 2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 11,24 | 14,61 | 21,48 | 24,85 | 28,47 | 30,59 | 31,59 | | 2917065 | 41 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

**<ԷՅ ԹԻ ՓԻ> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***Ն 3 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով <Էյ Թի Փի> բարեգործական հիմնադրամի 10.08.2016թ. N 33 գրությունը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի և ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 0418-001 ծածկագրով 0.61հա, 0418-002 ծածկագրով 0.82հա և 0418-003 ծածկագրով 1.09հա բնակավայրերի նշանակության այլ հողամասերը /ընդամենը՝ 2.52հա/ որպես զբոսայգու կանաչ գոտի ստեղծելու համար, 15 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով <Էյ Թի Փի> բարեգործական հիմնադրամին տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը օգոստոսի 2016թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***N 4 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1],76-80 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրելու և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 3-ի:
2.Կառուցապատման իրավունքով Կարապետ Սարգսյանին <Հասմիկ> մանկապարտեզի հարևանությամբ տրամադրելու 10քմ հողատարածք 20 տարի ժամկետով՝ տարեկան 10000 ՀՀ դրամ վճարով, առևտրի և սպասարկման տաղավար տեղադրելու համար:
3. Կառուցապատման իրավունքով Սամվել Պողոսյանին Աբովյան փողոց N28/3 հասցեում գտնվող տնամերձ հողամասին կից տրամադրելու 19,2քմ հողատարածք 50 տարի ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, հողամասի մուտքի կազմակերպման համար:
4.Կառուցապատման իրավունքով Ալեքսան Բարսեղյանին Տիգրան Մեծի փողոց N28 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք 20 տարի ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, առևտրի և սպասարկման տաղավար տեղադրելու համար:
5. Կառուցապատման իրավունքով Սամվել Միքայելյանին Ն. Աշտարակեցու փողոց N88 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք 20 տարի ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
6.Կառուցապատման իրավունքով Գևորգ Խաչատրյանին Տիգրան Մեծի փողոց N28[Ա] շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք 21 տարի ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու համար:
7. Կառուցապատման իրավունքով Անդրանիկ Բաղումյանին Ն. Աշտարակեցու փողոց N88 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք մինչև 2054թ. ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
8. Կառուցապատման իրավունքով Գրիգոր Գևորգյանին Ն. Աշտարակեցու փողոց N88 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք մինչև 2055թ. ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
9. Կառուցապատման իրավունքով Սևակ Զազյանին Ն. Աշտարակեցու փողոց N88 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք մինչև 2103թ. ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
10. Կառուցապատման իրավունքով Անահիտ Զազյանին Ն. Աշտարակեցու փողոց N88 շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք մինչև 2103թ. ժամկետով՝ տարեկան 20000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 7* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 1*

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 3*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*30.08.2016թ. հմ. 4-Ն որոշմամբ*

Հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /1քմ-ի տարեկան վճար/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Ս. Սարգսի փողոց /Քասախի կիրճին հարող հատված/ | 073-007-ից | 818 | բնակավայրերի | | այլ | 50 | |
| 2 | հողատարածք | Պռոշյան փողոց N9/1 /Հին շուկա/ | 179-001 | 1604 | բնակավայրերի | | ընդհանուր օգտագործման | 150 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

***N 5 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>ԱՎԱԳԱՆԻ՝</u>

*ԿՈՂՄ - 7* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 1*

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*30.08.2016թ.    հմ. 5-Ն  որոշմամբ*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | ՖՀԻ Գիտավանի N8 շենքի հարևանությամբ | 795-001-ից | 25 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |
| 2 | հողատարածք | ՖՀԻ Գիտավանի N8 շենքի հարևանությամբ | 797-002-ից | 25 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |
| 3 | հողատարածք | Նարեկ թաղամասի հարևանությամբ | 143-001-ից | 900 | բնակավայրերի | | հասարակական | 51 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝                    Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***N 6 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 2*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*30.08.2016թ. հմ. 6-Ն որոշմամբ*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 239-088-հց | 0,7689հա | գյուղ. | արոտ | | 100 | |
| 2 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 239-088-հց | 2,7355հա | գյուղ. | արոտ | | 100 | |
| 3 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 239-088-հց | 1,0997հա | գյուղ. | արոտ | | 100 | |
| 4 | հողատարածք | Արայի տեղամաս | 457-002-հց | 0,1635հա | գյուղ. | արոտ | | 100 | |
| 5 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 526-031 | 0,411հա | գյուղ. | արոտ | | 100 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/***

***Ն 7 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Անահիտ Նահապետյանի լիազորված անձ Գյուլվարդ Նահապետյանի 17.08.2016թ. N 1053 դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի և ՀՀ հողային օրենսգրքի 71 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ քաղաքի <Արա-2> թաղամասում գտնվող /ծածկագիր՝ 432-012/, Անահիտ Նահապետյանին սեփականության իրավունքով պատկանող 590քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, Միկոյան եղբայրների փողոց N154 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0129-0001/ 590քմ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հետ:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը օգոստոսի 2016թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

***N 8 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Խաչատուր Զազյանի 12.08.2016թ. N 1031՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին դիմումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 02-001-0562-0012 ծածկագրով, Խաչատուր Զազյանին սեփականության իրավունքով պատկանող 0,07հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակության արոտավայրի փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՀԵՅԱՆ/*

***N 9 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Դավիթ Ավագյանի 23.08.2016թ. N1083 և Արամ Հակոբյանի 30.08.2016թ. N1139 դիմումները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակներից Դավիթ Ավագյանին վարձակալության իրավունքով տրամադրելու 5 տարի ժամկետով՝ 1քմ-ի համար ամսական 250 ՀՀ դրամ վճարով:

2.Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակներից Արամ Հակոբյանին վարձակալության իրավունքով տրամադրելու 5 տարի ժամկետով՝ 1քմ-ի համար ամսական 250 ՀՀ դրամ վճարով:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

## ՇԱՆԹ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

***N 10 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 89-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածների և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի <Արա 1> թաղամաս 5-րդ փողոցի N 48 հասցեում գտնվող 02-001-0139-0043 ծածկագրով 600քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող տնամերձ հողամասը Ստոկհոլմում անցկացված ըմբշամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում, 54կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն ճանաչված Հայաստանի հավաքականի անդամ, մեր հայրենակից Շանթ Արշակի Խաչատրյանին նվիրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***30-ը օգոստոսի 2016թ.***

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***N 11 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 276-002 ծածկագրից 2318քմ գյուղատնտեսական նշանակության հողամասը ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս է մնացել, սակայն համայնքի վարչական սահմանների ճշգրտման արդյունքում պարզվել է, որ վերը նշված հողատարածքը իրականում հանդիսանում է համայնքային սեփականություն, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32 հոդվածի 17 կետի, 38 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 276-002 ծածկագրից 2318քմ գյուղատնտեսական նշանակության հողամասը /արոտավայր/ ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 100%-ը:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 7* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 1*

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

***30-ը օգոստոսի 2016թ.***

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

***<u>N 12 - Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով Մարգարիտա Գրիգորյանի և Արման Գևորգյանի դիմումները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

- Արման Գևորգյանին տալ գույքահարկի գծով հարկային արտոնություն՝ 21 000 ՀՀ դրամի չափով.
- Մարգարիտա Գրիգորյանին տալ գույքահարկի գծով հարկային արտոնություն՝ 721 000 ՀՀ դրամի չափով:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն